ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հոդված 314.2. Հայտարարագրերը ~~Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի~~ Կոռուպցիայի կանխարգելման ~~-~~հանձնաժողով դիտավորությամբ չներկայացնելը

1. ~~Հայտարարատու պաշտոնատար անձի, ինչպես նաև նրա ընտանիքի կազմի մեջ մտնող անձի կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված~~ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագրերը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.28-րդ հոդվածի ~~2-րդ~~ 1-ին կամ 4-րդ մասով սահմանված վարչական տույժի կիրառումից հետո՝ 30 օրվա ընթացքում, դիտավորությամբ չներկայացնելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հազարհինգհարյուրապատիկից երկուհազարապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

(314.2-րդ հոդվածը լրաց. 09.06.17 ՀՕ-102-Ն, փոփ. 24.06.19 ՀՕ-96-Ն)

Հոդված 314.3. Հայտարարագրերում կեղծ տվյալ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելը

1. ~~Հայտարարատու պաշտոնատար անձի, ինչպես նաև նրա ընտանիքի կազմի մեջ մտնող անձի կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված~~ ««Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագրերում կեղծ տվյալ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից երեքհազարապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

2. Նույն արարքը, որը հանգեցրել է առանձնապես խոշոր չափերով գույքի կամ եկամտի չհայտարարագրմանը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից չորս տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Հավելված N 6
Հայաստանի Հանրապետության
քրեական օրենսգրքի

ՑԱՆԿ
ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 154.2.	Ընտրողներին կաշառք տալը, կաշառք ստանալը, ընտրությունների ժամանակ բարեգործության արգելքի խախտումը կամ ընտրողի ազատ կամքի իրականացմանը խոչընդոտելը.
Հոդված 154.9.	Ընտրակաշառքի միջնորդությունը.
Հոդված 178.	2-րդ մաս, կետ 1.1) Խարդախություն՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով. 3-րդ մաս, եթե կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով.
Հոդված 179.	2-րդ մաս կետ 1) Յուրացնելը կամ վատնելը՝ պատշոնեական դիրքն օգտագործելով. 3-րդ մաս, եթե կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով.
Հոդված 189.1.	2-րդ մաս կետ 3) Ֆինանսական բուրգ ստեղծելը, կազմակերպելը կամ ղեկավարելը՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով.
Հոդված 190.	Հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելը (փողերի լվացում).
Հոդված 190.1.	3-րդ մաս կետ 3) ներքին տեղեկությունների անբարեխիղճ օգտագործումը՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով.
Հոդված 190.2.	3-րդ մաս կետ 3) գույքային չարաշահումը՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով.
Հոդված 195.	2-րդ մաս կետ 3) Հակամրցակցային գործունեությունը՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով,
Հոդված 200.	Առևտրային կաշառքը.
Հոդված 201.	Արհեստավարժ մարզամրցումների և հանդիսադիր առևտրային մրցույթների մասնակիցներին ու կազմակերպիչներին կաշառելը.
Հոդված 214.	Առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելը.
Հոդված 308.	Պաշտոնեական լիազորությունները չարաշահելը.
Հոդված 309.	Պաշտոնեական լիազորություններն անցնելը.
Հոդված 310.	Ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելը
Հոդված 310.1.	Ապօրինի հարստանալը.
Հոդված 311.	Կաշառք ստանալը.
Հոդված 311.1.	Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալը.
Հոդված 311.2.	Իրական կամ ենթադրյալ ազդեցությունը օգտագործելը.
Հոդված 312.	Կաշառք տալը.

Հոդված 312.1	Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողին ապօրինի վարձատրություն տալը.
Հոդված 312.2.	Իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու համար ապօրինի վարձատրություն տալը.
Հոդված 313.	Կաշառքի միջնորդությունը.
Հոդված 314.	Պաշտոնեական կեղծիքը.
Հոդված 314.2.	Հայտարարագրերը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով դիտավորությամբ չներկայացնելը.
Հոդված 314.3.	Հայտարարագրերում կեղծ տվյալ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելը.

Հոդված 332.	3.-րդ մաս Արդարադատության իրականացմանը և քննությանը խոչընդոտելը՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով
Հոդված 352.	Ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելը.
Հոդված 375.	Իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը.